

ԱՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ
6 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա ԹԵՍՏ 1

Շրջան, քաղաք _____

Ուս. հաստատություն _____

Դասարան _____

Ա. Ա. Հ. _____

Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 22 առաջադրանք:

1, 2-րդ առաջադրանքները լրացնել:

3-6-րդ, 8-15-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ:

Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, շրջանակի վրա դնում եք X նշանը և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

7-րդ առաջադրանքում կատարել համապատասխանեցում:

16 -21-րդ առաջադրանքներում գրել պատասխանը:

22 -րդ առաջադրանքում անհրաժեշտ է խնդրի լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորած ներկայացնել առաջադրանքից հետո հատկացված տեղում: Միայն վերջնական պատասխանի գրառման դեպքում միավոր չի տրվում:

1-22 -րդ յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստի առավելագույն միավորը՝ 22:

Թեստ - գրքույկի էջերի ազատ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Աշխատանքի կատարման համար տրվում է 60 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

Թեստ 1
1-2-րդ առաջադրանքները լրացնել

1. Երկու հարաբերությունների հավասարությունը կոչվում է _____:
2. Ամբողջ թվերի շարքում յուրաքանչյուր թիվ մեծ է իրենից _____ գրված ցանկացած թվից:

3-6-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

3. Հավաստի իրադարձություն է՝
 - 1) Չգել են զառը, ընկել է 6 թիվը:
 - 2) Բնական թվերի մեջ կա 5 -ի բաժանվող թվեր:
 - 3) Հաջորդ շաբաթ անձրև կգա:
 - 4) Գնել են հեռուստացույց, պարզվել է, որ այն չի աշխատում:
4. Հանդիսանում է արդյո՞ք $12:8 = 9:6$ հավասարությունը համեմատություն.
 - 1) այո
 - 2) ոչ
5. $y = 18$ և $x = 6$ մեծությունները ուղիղ համեմատական են: Այդ դեպքում ուղիղ համեմատականության գործակիցն է՝
 - 1) 108
 - 2) $\frac{1}{3}$
 - 3) 3
 - 4) $\frac{1}{108}$
6. Ջառը զցելիս կենտ թիվ դուրս գալու հավանականությունն է՝
 - 1) 2
 - 2) $\frac{1}{2}$
 - 3) $\frac{3}{5}$
 - 4) $\frac{1}{3}$

7-րդ առաջադրանքում կատարել համապատասխանեցում

- | 7. Համեմատություն | Անհայտ թիվ |
|----------------------------------|-------------------|
| 1) $\frac{x}{8} = \frac{12}{24}$ | Ա) 16 |
| 2) $5y:5 = 30:72$ | Բ) $\frac{5}{12}$ |
| | Գ) 4 |
| | Դ) $\frac{12}{5}$ |

Պատ՝ 1) _____, 2) _____

8-15-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

8. Արաքս գետի երկարությունը 1072 կմ է: Քարտեզի մասշտաբը $1:2500000$ է: Այդ դեպքում գետի պատկերումը քարտեզի վրա կլինի՝
 - 1) $42\frac{22}{25}$ սմ
 - 2) $4\frac{36}{125}$ սմ
 - 3) $21\frac{11}{25}$ սմ
 - 4) 25 սմ
9. $6\frac{4}{5} : \frac{17}{100} = 80 : 2$ համեմատության եզրային անդամների արտադրյալն է՝
 - 1) 544
 - 2) $13\frac{2}{5}$
 - 3) $\frac{17}{50}$
 - 4) $13\frac{3}{5}$
10. 20 կգ զանգված ունեցող համաձուլվածքը բաղկացած է պղնձից և ցինկից, որոնց զանգվածները հարաբերում են ինչպես 3:7: Համաձուլվածքում ցինկի զանգվածն է՝
 - 1) 2 կգ
 - 2) 6 կգ
 - 3) 14 կգ
 - 4) 7 կգ
11. 400 կգ թարմ սալորը չորացնելիս կորցնում է իր զանգվածի 75%-ը: Այդ դեպքում չոր սալոր կստացվի՝
 - 1) 200 կգ
 - 2) 300 կգ
 - 3) 100 կգ
 - 4) 325 կգ

19. 6 տետրի համար աշակերտը վճարեց 1200 դրամ: Որքա՞ն դրամ է հարկավոր այդպիսի 10 տետր գնելու համար:

Պատասխան _____

20. 80 կմ/ժ արագությամբ շարժվող մեքենան ճանապարհը անցավ 3 ժամում: Քանի՞ ժամում կանցնի այդ նույն ճանապարհը, եթե արագությունը լինի 60 կմ/ժ:

Պատասխան _____

21. Պերանը սղոցով կտրելն արժե 30 դրամ: Ինչքա՞ն պետք է վճարել գերանը 5 մասի բաժանելու համար:

Պատասխան _____

22-րդ խնդրի լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորած ներկայացնել առաջադրանքից հետո հատկացված տեղում

Քանի՞ կիլոմետր կանցնի ավտոբուսը 7 ժամում, եթե նրա արագությունը 2 անգամ փոքր է մեքենայի արագությունից, որը 5 ժամում անցնում է 560 կմ:

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց սանդղակով	

Ստուգող՝ _____
Ա.Ա.Հ.

_____ ստորագրությունը